Հավելված 6[1]
«ԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/10»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ <<ԳՈՌՆԵՐ>> ԿՈՉՎՈՂ ԱՅԳՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/10

ք. Մարալիկ «10» մայիսի 2019թ.

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանը, ի դեմս **Ա. Գևորգյանի**, որը գործում է **<<ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի** կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<Ռիյուտ Սենթր>> ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն Լ.Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի <<Գոռներ>> կոչվող այգու վերանորոգման աշխատանքների** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.07.2019թ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտանհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի

---

[1] *Սույն հավելվածը հրավերից հանվում է, եթե գնման առարկա չեն հանդիսանում շինարարական աշխատանքները:*

արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալ աթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում հայտնաբերվել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – հավելվածում[2]:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդորում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատուն ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրությունն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **8160000 (ութ միլիոն մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որից 1360000 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն**:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ԿԳՏ=ՄԳ/ՆԳ x ԾԳՏ x Ծ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[3].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ԿԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

---

[3] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ, ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[4]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

---

[4] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնությունն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Անի համայնքապետարան, ք. Մարալիկ, Մադաթյան 1 <<Կենտրոնական գանձապետարան>> ՀՎՀՀ 05546057 Հ/Հ 900492160016 Համայնքապետ՝ Ա. Գնորգյան	<<Ույուտ Սենթր>> ՍՊԸ Հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք.Արթիկ, Աբովյան 22 ՀՎՀՀ՝ 06108036 Հ/Հ՝ 2051222032481001 ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ Գյումրի մ/Ճ Տնօրեն՝ Լիովնիկ Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի՝ նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 10 » մայիսի 2019 թ. կնքված
ԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼ ԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[5]*

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ <<ԳՈՌՆԵՐ>> ԿՈՉՎՈՂ ԱՅԳՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N	Աշխ-րի և ծախսերի շիֆրը	Աշխատանքների անվանումը	չ.մ.	Քանակ	Միավորի արժեքը հազ.դրամ	Ընդհանուրը հազ.դրամ
1	2	3	4	5	6	7
		Քանդման աշխատանքներ /խամ քարից պարիսպ/				
1,00	27--175 գ-0,8	Տարածքի ե/բ բետոնե սալերի ապամոնտաժում /վերադարձ/	քառ.մ	164,00	1,34	219,67
2,00	26--36	Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում /վերադարձ/	գծ.մ	78,00	2,75	214,19
3,00	1-1587	Շին.աղբի բարձում ձեռքով ավտոհինքնաթափ մեքենաների վրա	խոր.մ	2,40	0,39	0,93
4,00	310-5	Շին աղբի տեղափոխում 5կմ	տ	4,32	1,07	4,64
		Ընդամենը			0,00	439,42
		Հավաքովե ե/բ էլեմենտներից պարիսպ			0,00	
5,00	1--961	Բնահողի մշակում ձեռքով 3-րդ կարգի բնահողում	խոր.մ	1,62	7,16	11,60
6,00	23-226	Բնահողի մշակում ձեռքով բառնալով ավտոհիրքնաթափերի վրա	տ	2,92	0,39	1,13
7,00	7--311	Ե/բ հավաքովի պարիսպի մոնտաժում կանգնակների և հումքերի հետ միասին բետոնացումով	գծ.մ	54,00	10,13	546,76
8,00		Ե/բ հավաքովի պարիսպի արժեքը /կանգնակ,հիմք,ե/բ ճաղավանդակ/ կ-տ	գծ.մ	54,00	7,24	391,04
		Ընդամենը			0,00	950,53
		Թուջե ցանկապատի վերանորոգում			0,00	
9	7-317 գ-0,6	Գոյություն ունեցող թուջե ցանկապատի ապամենտաժում և վերանորոգում /փոսորակների փորումով և հմքերի քանդումով/	գծ.մ	92,60	6,19	573,03
10	7-317	Թուջե վերանորոգված ցանկապատի տեղադրում հիմքերի բետոնացումով B-15	գծ.մ	92,60	10,79	999,20
11		Բետոն B-15 դասի	խոր.մ	1,80	44,76	80,56
12	15--614	Գոյություն ունեցող թուջե ցանկապատի յուղաներկում լավորակ 2 անգամ /սառիկ/	քառ.մ	152,00	2,83	430,70
		Ընդամենը			0,00	2083,49
		Տարածքի բարեկարգում			0,00	
13	1--1330	Տարածքի հարթեցում մեխանիզմով III կարգի բնահողում	100 քառ.մ	1,64	0,97	1,58
14	27--86-1	Բազալտե եզրաքարերի տեղադրում(բետոնե հիմքի վրա150*300)մմ	գծ.մ	88,00	13,56	1193,20
15	27--38-1 27--38--5	Ավազակոպճային հարթեցնող շերտի իրականացում 10սմ հաստ	քառ.մ	1,64	0,55	0,90
16	27--176	Տուֆ քարից սալիկներով տարածքի երեսապատում 8սմ հատ ավազի շերտի վրա	քառ.մ	164,00	9,13	1497,13
17	6--21	Աստիճանների տակ Խամքարբետոնե հիմքերի իրականացում B-12,5 դասի բետոնով	խոր.մ	1,00	52,58	52,58

[5] Ծավալ աթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ընտաշխատանքների կատարման արժեքների:

18	6--1	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B-15 դասի բետոնով	խոր.մ	0,20	50,01	10,00
19	6--90	Բետոնե հենապատի իրականացում B-15 դասի բետոնով	խոր.մ	2,40	62,48	149,96
20	15--77 կիրառ	Արտաքին աստիճանահարթակի,աստիճանաքայլերի և հարթակի պատում բազալտից սալիկներով 3սմ հաստ.	քառ.մ	11,00	28,48	313,30
		Ընդամենը				3218,66
		Հուշարձանների վերանորոգում				
21	8--161	Կոպտատաշ տուֆ քարերի վերականգնում	խոր.մ	0,50	57,89	28,94
22	15--10 15--59 տեխ մաս կետ 1,5	Որմնախարիսխի երեսապատում 30մմ հաստ սրբատաշ բազալտե սալիկներով	քառ.մ	24,80	40,16	995,94
23		Ցանցի ձգում պատերի վրա Վռ-1	տ	0,05	587,25	30,13
24	8--531	Տուֆ քարից քիվի վերանորոգում h-20սմ մինչև 9 ջարդվածքով	գծ.մ	1,50	52,09	78,14
		Ընդամենը				1133,14
		Ե/բ ջրահեռացման առուներ				
25	25--17	Պողպատե անկյունակներից ցանցավոր կափարիչի տեղադրում	տ	0,56	864,22	483,96
		Ընդամենը				483,96
		Տարածքի էլ.լուսավորություն				
		Շինարարական աշխատանքներ				
26	1--961	Բնահողի մշակում խրամատներում ձեռքով	խոր.մ	21.6	7,16	154,67
27	1--968	Բնահողի հետլիցք ձեռքով	խոր.մ	21.6	3,44	74,33
28	33--820 կիրառ	Պողպատե հենասյուների տեղադրում բնահողի մշակումով, սյուների ներկումով/ d-57*3.5մմ H=3մ	հատ	4,00	18,88	75,51
29					0,00	
30	ռ21--267 գ-0,6	Փոսորակի բետոնացում B7.5 դասի բետոնով	խոր.մ	1,50	43,29	64,93
		Ընդամենը				369,44
		Մոնտաժ				
31	8--141-1	Հաղորդալարի անցկացում խողովակների միջով խրամատներում	100 գծ.մ	0.9	39,59	35,63
32	8-142-1	Ավազե ենթաշերտի իրականացում մալուխային գծերի տակ	գծ.մ	90,00	0,30	27,35
33		Ավազ	խոր.մ	3,60	0,15	0,52
34	8--418-7	D=50մմ ՊՎՔ խողովակի տեղադրում	գծ.մ	90,00	1,42	127,56
35					0,00	0,00
36	8--525-2	Ավտոմատ անջատիչ	հատ	1	7,08	7,08
37	8-370-3	Արտաքին լուսատուների մոնտաժում	հատ	4	5,97	23,87
38	15--614	Հենասյուների ներկում 2 անգամ գունավոր 20հատ	քառ.մ	2,50	2,82	7,05
		Ընդամենը				229,06
		Նյութեր				
39		Մետաղական կալունակներ	հատ	4	0,45	1,79
40		Լուսատու լուսադիոդային արժեքը	հատ	4	40,37	161,50
41		Ավտոմատ անջատիչ 60Ա	հատ	1,00	1,61	1,61
42		ԱՊՊՎ380 հատ 1*10քառ.մմ հաղորդալար	գծ.մ	160	0,08	13,38
43		Շերտապողպատ 300*300*5մմ	կգ	14.13	0,72	10,15
44		Պողպատից խողովակ D=32մմ	գծ.մ	2	0,86	1,71
45		Մեկուսիչ	հատ	8	0,45	3,58
		Ընդամենը				193,72
	Ընդհանուրը					9101,44

Չնախատեսված ծախսեր 1.5%	136,52
Ընդամենը	9237,96
ԱԱՀ 20%	1847,59
Ընդամենը	11085,55

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Առնադբյուր բնակավայրում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Անի համայնքապետարան,
գ. Մարալիկ, Մադաթյան 1
<<Կենտրոնական զանձապետարան>>
ՀՎՀՀ 05546057
Հ/Հ 900492160016
Համայնքապետ՝ Ա. Գնորգյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ույուտ Սենթր>> ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, գ.Արթիկ,
Արովյան 22
ՀՎՀՀ՝ 06108036
Հ/Հ՝ 2051222032481001
ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ Գյումրի մ/ճ
Տնօրեն՝
Լիովնիկ Հարությունյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 2
« 10 » մայիսի 2019 թ. կնքված
ԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ <<ԳՈՌՆԵՐ>> ԿՈՉՎՈՂ ԱՅԳՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը **	
		Սկիզբը	Ավարտը
1	**ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի <<Գոռներ>> կոչվող այգու վերանորոգման աշխատանքների**	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.07.2019թ.
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Անի համայնքապետարան,
գ. Մարալիկ, Մադաթյան 1
<<Կենտրոնական գանձապետարան>>
ՀՎՀՀ 05546057
Հ/Հ 900492160016
Համայնքապետ՝ Ա. Գևորգյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ուիյուտ Սենթր>> ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, գ.Արթիկ,
Աբովյան 22
ՀՎՀՀ՝ 06108036
Հ/Հ՝ 2051222032481001
ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ Գյումրի մ/ճ
Տնօրեն՝
Լիովնիկ Հարությունյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 3
«10» մայիսի 2019թ. կնքված
ԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	45231270/3	Հանգստի տարածքների վերանորոգման աշխատանքներ					8160000	8160000	8160000	8160000	8160000	8160000	8160000	8160000	8 160000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Անի համայնքապետարան,
ք. Մարալիկ, Մադաթյան 1
<<Կենտրոնական զանձապետարան>>
ՀՎՀՀ 05546057
Հ/Հ 900492160016
Համայնքապետ՝ Ա. Գևորգյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼ ԱՌՈՒ

<<Ուիյուտ Սենթր>> ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք.Արթիկ,
Արովյան 22
ՀՎՀՀ՝ 06108036
Հ/Հ՝ 2051222032481001
ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ Գյումրի մ/ճ
Տնօրեն՝
Լիովնիկ Հարությունյան

/ստորագրություն/

Կ.Տ